ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/48

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Աբրահամյանի (պետ. ռեգիստրի գրանցման համար՝ 282.110.06637),

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 08.02.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրության հիման վրա, 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ նախաձեռնել է «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գործի նախապատմությունը,

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) armeps.am համակարգի միջոցով (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) հայտարարել է № ՀՀ ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): «Մեդիսոն էյբլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Մրցույթին ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Պատվիրատուն Հայտում արձանագրել է «անհամապատասխանություններ» հրավերի պահանջների նկատմամբ, որի վերաբերյալ ծանուցել է Ընկերությանը և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել: Պատվիրատուն արձանագրված «անհամապատասխանությունները» մանրամասն չի նկարագրել, նկարագրել է վերացական և անհասկանալի ձևով: Ընկերությունը փորձել է կատարել Պատվիրատուի պահանջը, և ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս ներկայացրել է շտկված Հայտը, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով շտկված Հայտը էլեկտրոնային ստորագրել հնարավոր չէր և Հայտը ստորագրվել է ձեռագիր ու կնքվել է Ընկերության կնիքով, որով ըստ էության Ընկերությունը կատարել է հայտը ստորագրելու իր պարտականությունը: Արդյունքում Պատվիրատուն Հայտը մերժել է և դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով: Ընդ որում Պատվիրատուն հայտերի գնահատումը 10 աշխատանքային օրվա փոխարեն իրականացրել է 14 աշխատանքային օրվա ընթացքում: Բացի այդ, Հայտը մերժելու վերաբերյալ որոշմամբ հայտում տեղ գտած անհամապատասխանությունը հստակ նկարագրված չէ:

1. Գործի փաստական հանգամանքները.

2.1. Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 30.12.2021թ.-ի ժամը 10:30-ին: 30.12.2021թ.-ի հայտերի բացման նիստը հանձնաժողովի կողմից կասեցվել է և կայացվել է որոշում՝ հաջորդ նիստը հրավիրել մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. 10-րդ աշխատանքային օրը՝ 17.01.2022թ.-ի ժամը 17:00-ին հանձնաժողովը հրավիրել է նիստ, նիստի վերաբերյալ կազմվել է թիվ 2-2 արձանագրությունը, որտեղ Ընկերության հայտում արձանագրել են «անհամապատասխանություններ», որոնք արձանագրությամբ նկարագրվել են ոչ հստակ և վերացական ձևով: Ի թիվս այլնի, «անհամապատասխանություններ» արձանագրվել են Հայտով ներկայացված 1.2 հավելվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ տողերում, որոնք նկարագրված էին հետևյալ կերպ (ըստ տողերի).

3-րդ և 4-րդ տողերում նշված մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց՝ օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին,

6-րդ և 7-րդ տողերով ներկայացված չեն մոդելները:

2.3. Հրավերի թիվ 1.2 հավելվածում առկա է մասնակցի կողմից առաջարկվող սարքավորման մոդելը նշելու սյունակ, սակայն այդ սյունակի վերտառությանից բխում է, որ առաջարկվող սարքավորման մոդելը մասնակիցը կարող է և չնշել, այսինքն սարքավորման մոդել նշելը պարտադիր չէ:

2.4. 18.01.2022թ-ին Ընկերությունը շտկել է Հայտը՝ ինչքանով որ ընկալել է Պատվիարտուի պահանջը: Շտկված Հայտը Ընկերության ղեկավարը ստորագրել է ձեռագիր և կնքել է Ընկերության կնիքով, Հայտը էլեկտրոնային չի ստորագրվել, քանի որ էլեկտրոնային թվային ստորագրման համար նախատեսված ծրագիրը աշխատաում էր խափանումներով, ուստի Հայտի շտկման ժամկետը բաց չթողնելու համար այն ստորագրվել է ձեռագիր և ուղարկվել է Պատվիրատուի նշած էլ. փ. հասցեով: Հայտով 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ տողերի համար հրավերով սահմանված և Հայտով առաջարկված սարքավորումների նկարագրերի համեմատականը ներկայացված է թիվ 1 աղյուսակում, որոնք ուսումնասիրելուց երևում է, որ դրանք միմյանց համապատասխանում են:

թիվ 1 աղյուսակ

№	սարքավորման		
	Անվանումը	հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրը	հայտով առաջարկված տեխնիկական բնութագիրը
3	Օդի արտածման կանալային օդամուղ	500մ3/ժամ 200 ՊԱ	500մ3/ժամ 200 ՊԱ
4	Օդի արտածման կանալային օդամուղ	800մ3/ժամ 200 ՊԱ	800մ3/ժամ 200 ՊԱ
5	Սալօջախի վրա տեղադրվող գլխանոց օդամուղով	450մ3/ժամ	450մ3/ժամ 240 ՊԱ

6	Օդահովացուցիչի արտաքին բլոկ	22կՎտ	22կՎտ
7	Օդահովացուցիչի	22կՎտ	22կՎտ

2.5. 21.01.2022թ.-ի ժամը 15:00-ի արձանագրությամբ Ընկերության Հայտը Պատվիրատուն մերժել է այն պատճառաբանությամբ, որ 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ տողերում ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին իսկ 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց՝ օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մինչդեռ հրավերով սարքավորումների մոդելներ սահմանված չեն և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի համաձայն հրավերում սարքավորման մոդել նշել չի թույլատրվում: Իսկ ինչ վերաբերվում է 5-րդ տողով Ընկերության կողմից առաջարկված սարքավորման տեխնիկական բնութագրին, ապա Հայտով առաջարկված սարքավորման տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանվածին:

2.6. Պատվիրատուն հայտերի գնահատումը 10 աշխատանքային օրվա փոխարեն իրականացրել է 14 աշխատանքային օրվա ընթացքում, մասնավորապես՝ հայտերի գնահատումն իրականացվել է 30.12.2021թ.-ից մինչև 21.01.2022թ.-ն ընկած ժամանակահատվածում: Բացի այդ, Հայտը մերժելու վերաբերյալ որոշմամբ հայտում տեղ գտած անհամապատասխանությունը հստակ նկարագրված չէ:

3. Գործի փաստական և իրավական հիմքերը.

3.1. Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից՝ Ընկերության հայտը մերժվել է այն պաճառաբանությամբ, որ 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ տողերում ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին իսկ 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց՝ օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին: Բացի այդ, Պատվիրատուն նշել է, որ Ընկերության շտկված հայտը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ: Այսպես,

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ մոդելին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի ա. պարբերության համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Կրագի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՀՀ Սահմանադրության «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, (...), կիրառվում են (...), 1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածի համաձայն՝ Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի «Սահմանադրական դատարանի ակտերը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նույն օրենքի «Որոշման կամ եզրակացության շարադրանքը» վերտառությամբ 64-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները՝ դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԴՈ–722 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիքորոշումը. ««Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, (...):

(...): Բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ապա որևէ տարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև:»:

Վերոգրյալից հետևում է, որ.

Եթե մասնակցի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին, ապա հայտը պետք է գնահատվի որպես հրավերի պահանջներին բավարարող, որպիսի հանգամանքներում այն ենթակա չէ մերժման: Ուստի, եթե մասնակցի կողմից հայտով առաջարկվող ապրանքի (սարքավորման) տենիկական բնութագիրը համապաստախնում է հրավերով սահմանվածին, ապա այն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառաբանությամբ ենթակա չէ մերժման: Ընդ որում, հրավերով գնման առարկայի մոդել չի սահմանվում իսկ սահմանվելու դեպքում մասնակիցը հնարավորություն ունի առաջարկել հրավերով սահմանված մոդելին համարժեք մոդել՝ այսինքն, հրավերով սահմանված մոդելից տարբերվող մեկ այլ մոդելի գնման առարկա (սարքավորում): ՈՒստի, եթե մասնակցի հայտով առաջարկված գնման առարկայի (սարքավորման) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանվածին, ապա մասնակցի առաջարկած գնման առարկայի նկարագիրը պետք է գնահատվի որպես հրավերով սահմանված պայմաններին բավարարող՝ անկախ նրանից թե մասնակիցը ինչ մոդելի ապրանք է առաջարկում:

Նշյալից հետևում է, որ եթե մասնակցի առաջարկված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանվածին, ապա պատվիրատուն իրավասու չէ մասնակցի հայտը մեժելու այն պատճառաբանությամբ, որ հայտով ներկայացված գնման առարկայի մոդելը չի համապատասխանում հրավերով սահմանվածին:

Եթե օրենքով պահանջվում է ստորագրել որևէ փաստաթուղթ և պարտադիր չէ նոտարական կարգով ստորագրության վավերականության հաստատում, ապա այդ փաստաթուղթը կարող է ստորագրվել, և ձեռագիր, և էլեկտրոնային թվային եղանակով, ընդ որում, երկու դեպքում էլ այդ փաստաթուղթը ունենալու է նույն իրավաբանական ուժը, հետևաբար անկախ ստորագրության ձևից այն ենթակա է ՀՀ տարածքում բոլորի կողմից ընդունման, որպես պատշաճ ստորագրված՝ ստորագրող անձի կողմից հաստատված փաստաթուղթ: Ուստի, եթե հայտը ստորագրողի կամքից անկախ որևէ պատճառով էլեկտրոնային թվային ստորագրել հնարավոր չէ (օրինակ՝ էլեկտրոնային թվային ստրոգարության համար նախատեսված ծրագրի չաշխատելու պատճառով), ապա էլեկտրոնային թվային ստորագրության փոխարեն ձեռագիր ստորագրված հայտը պետք է դիտվի որպես հրավերի պահանջներին բավարարող, քանի որ հայտը ձեռագիր ստորագրելով մասնակիցը ըստ էության կատարել է Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված իր պարտականությունը, որպիսի հանգամանքներում ձեռագիր ստորագրված հայտը ենթակա չէ մերժման՝ էլեկտրոնային թվային ստորագրված չլինելու պատճառաբանությամբ:

Համադրելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ եթե հայտով ներկայացված գնման առարկայի (սարքավորման) տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանվածին և հայտը մասնակցի կողմից ստորագրված է ձեռագիր, ապա հայտը էլեկտրոնային ստորագրված չլինելու ու հայտում նշված մոդելը հրավերով սահմանվածին չհամապատասխանելու պատճառաբանությամբ ենթակա չէ մերժման, հետևաբար այն պետք է գնահատվի բավարար:

3.1.1. Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից Ընկերության հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ՝

1) 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ տողերում ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Մինչդեռ, նշյալ պատճառաբանությամբ Հայտը մերժվել է այն պայմաններում, երբ այդ տողերի համար Հայտով ներկայացված տեխնիկական բնութագրերը համապատասխանում էին հրավերով սահմանվածին: Ուստի

եթե այս երկու հանգամանքները դիտարկենք վերոգրյալ նորմերի և մեկնաբանությունների լույսի ներքո, ապա կարող ենք արձանագրել, որ Հայտը հրավերով սահմանված մոդելներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ մերժման ենթակա չէր, քանի որ հայտով առաջարկված սարքավորումների տեխնիկական բնութագրերը համապատասխանում էին հրավերով սահմանվածին: Ավելին, հրավերով մոդելներ սահմանված չէին, որոնց պետք է համապատասխան էին 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ տողերում նշված սարքավորումները՝ այսինքն, հրավերում առակա չէր այն չափանիշը (մոդելը) որին չհամապատասխանելու պատճառաբանությամբ մերժվել է Ընկերության հայտը: Բացի այդ, հրավերի 1.2 հավելվածի բովանդակությունից բխում է, որ առաջարկվող սարքավորման մոդելը մասնակիցը կարող է և չնշել՝ այսինքն, ըստ հրավերի սարքավորման մոդել Հայտում նշելը պարտադիր չէ: ՈՒստի, ամփոփելով նշյալը կարող ենք արձանագրել, որ Ընկերության հայտը ենթակա չէր մերժման՝ 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ տողերում ներկայացված մոդելները հրավերով սահմանվածին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, քանի որ նշյալ տողերով Ընկերության առաջարկած սարքավորումների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով սահմանվածին:

2) 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց՝ օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մինչդեռ, նշյալ պատճառաբանությամբ հայտը մերժվել է այն պայմաններում, երբ Ընկերության կողմից Հայտով 5-րդ տողով առաջարկված սարքավորման տեխնիկական բնութագիրը համապատասխանում էր հրավերով սահմանվածին՝ այսինքն, հայտով առաջարկվածը այն սարքավորումն է որը պահանջվել է հրավերով, հետևաբար հիմնազուրկ է Պատվիրատուի պնդումը առ այն, որ Ընկերության կողմից առաջարկված սաքավորումը այն չէ ինչը սահմանված է հրավերով: ՈՒստի նշյալից կարող ենք փաստել, որ Ընկերության հայտը ենթակա չեր մերժման՝ 5-րդ տողով հրավերով սահմանվածին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, քանի որ 5-րդ տողով Ընկերության ներկայացրած սարքավորման տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով սահմանվածին:

3) Որ Ընկերության հայտը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Մինչդեռ, Պատվիրատուին ուղարկած շտկված Հայտը Ընկերության ղեկավարը ստորագրել էր ձեռագիր և կնքել էր Ընկերության կնիքով: Հայտը ձեռագիր է ստորագրվել այն պատճառով, որ Ընկերությունից Հայտի շտկում պահանջելու ժամանակահատվածում

վերջինիս համակարգիչների ծրագրերը, մասնավորապես՝ էլեկտրոնային թվային ստորագրման համար նախատեսված ծրագիրը աշխատաում էր խափանումներով, ուստի Հայտի շտկման ժամկետը բաց չթողնելու համար այն ստորագրվել է ձեռագիր և սահմանված ժամկետում ուղարկվել է Պատվիրատուի նշած էլ. փ. հասցեով: Հայտը ձեռագիր ստորագրված լինելու հանգամանքը դիտարկելով ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-722 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման և վերոգրյալ նորմերի ու մեկնաբանությունների լույսի ներքո կարող ենք եզրահանգել, որ Ընկերությունը հայտը ձեռգիր ստորագրելով ըստ էության կատարել է Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով և Մրցույթի հրավերով սահմանված հայտը ստորագրելու իր պարտականությունը, որպիսի հանգամանքներում ձեռագիր ստորագրված Հայտը ենթակա չէր մերժման:

Ամփոփելով սույն դիրքորոշման 3.1. կետը կարող ենք արձանագրել, որ Հայտը ենթակա չէր մերժման՝ 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ տողերում ներկայացված մոդելները և 5-րդ տողով ներկայացված սարքավորումը հրավերի պահանջներին չհամապատասխանելու ու հայտը էլեկտրոնային թավային ստորագրությամբ ստորագրված չլինելու պատճառաբանությամբ: Քանի որ Հայտը ստորագրվել է ձեռագիր և կնքվել է Ընկերության կնիքով իսկ Հայտի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ տողերով ներկայացված սարքավորումների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով սահմանվածին:

3.2. ՀՀ Սահմանադրության «Պետական կառավարման համակարգի մարմինները» վերտառությամբ 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, (…) ենթակա այլ մարմիններ, որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են օրենքով»:

Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն «2. Կառավարությանը ենթակա մարմիններն են՝ 5) Քաղաքաշինության կոմիտեն»:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոգրյալի համաձայն, Քաղաքաշինության կոմիտեն հանդիսանում է պետական կառավարման համակարգի մարմին: Այդ իսկ պատճառով վերջինիս լիազորությունները

սահմանվում են օրենքներով, հետևաբար Քաղաքաշինության կոմիտեն իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է օրենքներով:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն հայտերի գնահատման գործընթացը իրականացվում է 10 շխատանքային օրվա ընթացքում, ուստի Պատվիրատուն լինելով պետական կառավարման մարմին պետք է անվերապահորեն հետևի այդ նորմին, քանի որ հակառակ ապարագայում այդ նորմի խախտմամբ իրականացված գործողությունները դիտվելու են որպես օրենքով վերջինիս վերապահված լիազորությունների սահմանազանցում, որպիսի հանգամանքներում դրանք չեն կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ, այդ թվում՝ Ընկերության համար այնպիսի բացասական հետևանքներ, ինչպիսին է վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելը:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, հայտերի գնահատումը Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված 10 աշխատանքային օրվա փոխարեն իրականացվել է 14 աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝ ընկերության հայտը մերժվել է հայտերի բացման օրվան հաջորդող 14-րդ աշխատանքային օրը, որպիսի հանագամանքներում Պատվիրատուն թույլ է տվել իր լիազորությունների սահմանազանցում և խախտել է ՀՀ Սահմանադրության «Պետական կառավարման համակարգի մարմինները» վերտառությամբ 159-րդ հոդվածի 1-ին մասը և Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետը: ՈՒստի կարծում ենք, որ Պատվիրատուին վերապահված լիազորությունների սահմանազանցմամբ և ՀՀ սահմանադրության ու Կարգի խախտումներով իրականացված գործեղությունների հետևանքով Ընկերության հայտը մերժելը ու Ընկերությանը Ցուցակում ներառելը խախտելու է իրավական պետության սկզբունքը, որպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը, քանի որ այդ սկզբունքի համաձայն իրավունքի բոլոր սուբյեկտները, այդ թվում պետական կառավարման մարմինները պետք է գործեն օրինական՝ այն է իրենց գործողությունները պետք է իրականացնեն իրավական ակտերի պահանջների պարտադիր պահպանմամբ: Ուստի ելնելով նշյալից կարծում ենք, որ սույն ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը Ցուցակում ներառվելու ենթակա չէ, քանի որ Ընկերության Հայտը մարժվել է իրավական պետության սկզբունքը, ՀՀ Սահմանադրության և Կարգի նորմերը խախտելով, որպիսի հանգամանքներում Ընկերությունը չի կարող կրել այդ գործողություններից բխող բացասական հետևանքները:

3.3. Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ Ընկերությունը գնման գործընթացում ստանձնած որևէ պարտավորություն խախտելու միտում չի ունեցել և մեր կարծիքով չի խախտել: Ուստի խնդրում ենք Ընկերությանը չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված խախտումը:

4. Պահանջը

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Մեդիսոն էյբլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/48 ծածկագրով ընթացակարգը»:

Այնուհետև Ընկերության կողմից ներկայացվել է դիրքորոշման լրացում, հետևյալ բովանդակությամբ.

«Հարգելի՛ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ,

Ձեր վարույթում է գտնվում ՍՑ-ՆԳ-2022/48 ծածկագրով ընթացակարգը: Որի վերաբերյալ «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ն ներկայացրել է դիրքորոշում, սակայն ցանկանալով լրացնել սկզբնապես ներկայացված դիրքորոշումը՝ Ձեզ ենք ներկայացնում դիրքորոշման սույն լրացումը:

Սույնով ցանկանում ենք անդրադառնալ Ընկերության հայտը մերժելու այն պատճառաբանությանը որով նշված է, որ 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց՝ օդամուղով:

Ինչպես երևում է Մրցույթի հրավերից՝ Պատվիրատուն պահանջել է սալօջախի վրա տեղադրվող գլխանոց 450մ3/ժամ հզորությամբ օդամուղով, այս պահանջից հստակ երևում է, որ նշյալ սարքավորումը բաղկացած է երկու բաղադրիչից գլխանոցից և 450մ3/ժամ հզորությամբ օդամուղից: Այս երկու բաղադրիչներից գլխավորը 450մ3/ժամ հզորությամբ օդամուղն է, քանի որ օդամուղն է, որ իր աշխատանքի միջոցով ապահովում է 450մ3/ժամ հզորությամբ օդի մղումը փակ տարածքից դեպի դուրս: Սալոջախի գլխանոցը սովորաբար պատրաստվում է երկաթային մասից՝ ներժից, և այն չունի մոդել: Ելնելով այդ հանգամանքից, մենք մեր ներկայացրած հայտում նշել ենք մեր կողմից առաջարկվող օդամուղի մոդելը և հզորությունը՝ որն այն կարող է ապահովել, մասնավորապես՝ մեր կողմից առաջարկվել է BEHTC BKM 150 մոդելի օդամուղ իսկ գլխանոցը մեր պատվերի համաձայն պատրաստվելու էր օդամուղը մեզ մատակարարող ընկերության կողմից:

ВЕНТС ВКМ 150 օդամուղը նախատեսված է արտադրական, կոմերցիոն և հանրային տարածքների օդի մաքրման՝ օդի մատակարարման և արտանետման համար, որի հզորությունը մինչև 580մ3/ժամ է, այսինքն այն ունի ավելի բարձր արտադրողականություն քան սահմանված է հրավերով, որը միայն ի օգուտ Պատվիրատուի է, քանի որ օդի մաքրումը իրականացնում է ավելի արագ: Հարկ է նշել, որ Օդամուղն ունի հզորության կարգավորիչ և Պատվիրատուն ելնելով անհրաժեշտությունից կարող է կարգավորել արտանետվող օդի քանակը, այսինքն օդամուղը կարող է աշխատել ինչպես ամբողջ հզորությամբ՝ 580մ3/ժամում, այնպես էլ 450մ3/ժամ հզորությամբ:

Այսպես՝ հայտով մենք ներկայացրել ենք այն հիմնական սարքի՝ օդամուղի տվյալները որը ապահովում է Պատվիրատուի կողմից պահանջված օդի արտանետման հզորությունը իսկ գլխանոցի մոդելը չենք նշել, քանի որ, ինչպես նշվեց վերոգրյալով՝ այն պատրաստվելու էր առանձին և չունի մոդել: Բացի այդ, Մրցույթի հրավերով՝ շինարարական աշխատանքների նախագծով գլխանոցի նախագիծը սահմանված չէ, որպիսի պայմաններում հնարավոր չէ Պատվիրատուին առաջարկել կոնկրետ գլխանոց: Ուստի, ելնելով այս հանգամանքներից, մենք նախատեսում էինք գլխանոցը պատրաստել շինարարական աշխատանքների ընթացքում համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրվելիք նախագծին և պահանջին, որը կոնկրետ մոդել չունի: Նշյալից կարող ենք եզրակացնել, որ մեր հայտում գլխանոցի մոդել չնշելը ուղղված չէր հրավերով սահմանված որևէ պարտավորությունից խուսափելուն:

Ցանկանում ենք նաև նշել, որ շուկայում առկա են գազօջախի վրա տեղադրվող օդի մաքրման կոնկրետ մոդել ունեցող սարքեր, բայց դրանք կոչվում են օդաքարշ պահարաններ և դրանք հիմնականում նախատեսված են տնային օգտագործման համար: Բացի այդ, նշյալ պահարանները ունեն կոնկրետ չափ, և դա այս Մրցույթի շրջանակներում Պատվիրատուին առաջարկելը չէր բխի վերջինիս շահերից, քանի որ հրավերով գլխանոցի չափ և նախագիծ սահմանված չլինելու պայմաններում Պատվիրատուն ստիպված էր լինելու ընդունել մասնակցի կողմից առաջարկված ցանկացած մոդելի պահարան, այնինչ հետագայում հնարավոր է պարզվեր, որ այդ մոդելի պահարանի չափերը չեն համապատասխանում Պատվիրատուի պահանջին: Ուստի նշյալից կարող ենք եզրակացնել, որ մեր առաջարկած տարբերակը այն է՝ գլխանոցը առանձին պատրաստելու տարբերակը Պատվիրատուի համար ամենա ընդունելին է:

Վերոգրյալից հետևում է, որ Ընկերությունը հրավերով ստանձնած որևէ պարտավորություն խախտելու միտում չի ունեցել, գործել է բարեխիղճ և իր հայտը ներկայացրել է բացառապես առաջնորդվելով հրավերի պահանջներով:

4. Պահանջը

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին. խնդրում ենք՝ ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Մեդիսոն էյբլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/48 ծածկագրով ընթացակարգը»:

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի տնօրենը և ներկայացուցիչը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/48 ընթացակարգի շրջանակներում 09.02.2022թ. ժամը 10:02-ին և 21.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, մասնակցել են նիստերին:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի նոյեմբերի 19-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10 ծածկագրով Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքի (Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ) կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություններ):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/48 ընթացակարգի շրջանակներում 09.02.2022թ. ժամը 10:02-ին և 21.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/48 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/48 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի Հավելված 1.2-ի սարքերի և սարքավորումների նկարագրի 5-րդ տողով, սահմանվել է հետևյալը.

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել /առկայության պարագայում/	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր
5	Սալօջախի վրա տեղադրվող գլխանոց օդամուղով 450մ³/ժամ	լրակ.	1	1 տարի				

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ն:

4. «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի 5-րդ տողով ներկայացվել է հետևյալը

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել /առկայության պարագայում/	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր
5	Սալօջախի վրա տեղադրվող	լրակ	1	1 տարի	1 տարի	ВЕНТС	ВКМ 150	450մ³/ժ 240ՊԱ

	գլխանոց օդամուղով 450մ³/ժամ							

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի մասով արձանագրել է հետևյալը.

«Հավելված 1-ի մասով՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող հայտարարագրում լրացված չեն 3.7.1 և 3.7.2 տողերը: Հավելված 1.2-ի մասով՝

ա) 14-17-րդ, 19-րդ և 25-րդ տողերում մասնակցի կողմից նվազագույն երաշխիքային ժամկետներ նշված չեն,

բ) 19-րդ և 25-րդ տողերում նշված չեն արտադրող ընկերությունների անվանումները,

գ) 3-4-րդ տողերում նշված մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

դ) 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց՝ օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին,

ե) 6-7-րդ տողերով ներկայացված չեն մոդելները,

զ) 1-ին տողով առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիրը թերի է լրացված,

է) 25-րդ տողով առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին»:

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (18.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.01.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ արձանագրված անհամապատասխանությունները «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, Հավելված 1.2-ի մասով՝ 3-4-րդ և 6-7-րդ տողերով ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 24.01.2022թ. թիվ 02/16.4/575-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը և «Առաջին Փորձագիտական» ՍՊԸ-ի կողմից տրված 23.02.2022թ. թիվ 01012201 եզրակացությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և ***գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են <u>անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին***

ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/10» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի Հավելված 1.2-ի սարքերի և սարքավորումների նկարագրի 5-րդ տողով, սահմանվել է հետևյալը.

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել /առկայության պարագայում/	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր
5	Սալօջախի վրա տեղադրվող գլխանոց օդամուղով 450մ3/ժամ	լրակ.	1	1 տարի				

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ն:

«Մեդիսոն էյբլ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի 5-րդ տողի մասով ներկայացվել է հետևյալը

N	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Չ/Մ	Քանակ	Նախագծողի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում			
					Մասնակցի կողմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ	Արտադրող ընկերության անվանումը	Մոդել /առկայության պարագայում/	Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիր
5	Սալօջախի վրա տեղադրվող գլխանոց օդամուղով 450մ3/ժամ	լրակ.	1	1 տարի	1 տարի	ВЕНТС	ВКМ 150	450մ3/ժ 240ՊԱ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի մասով արձանագրել է հետևյալը.

«Հավելված 1-ի մասով՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող հայտարարագրում լրացված չեն 3.7.1 և 3.7.2 տողերը: Հավելված 1.2-ի մասով՝

ա) 14-17-րդ, 19-րդ և 25-րդ տողերում մասնակցի կողմից նվազագույն երաշխիքային ժամկետներ նշված չեն,

բ) 19-րդ և 25-րդ տողերում նշված չեն արտադրող ընկերությունների անվանումները,

գ) 3-4-րդ տողերում նշված մոդելները անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

դ) 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց՝ օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին,

ե) 6-7-րդ տողերով ներկայացված չեն մոդելները,

զ) 1-ին տողով առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիրը թերի է լրացված,

է) 25-րդ տողով առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին»:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (18.01.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 17.01.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանությունները «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, Հավելված 1.2-ի մասով՝ 3-4-րդ և 6-7-րդ տողերով ներկայացված

մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, 5-րդ տողով ներկայացված սարքավորումը չի հանդիսանում սալօջախի վրա տեղադրվող գլխանոց օդամուղով, ուստի չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

1.Անդրադառնալով Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելուն՝ հայտնում եմ հետևյալը.

Ընկերության կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացվել է «Առաջին Փորձագիտական» ՍՊԸ-ի կողմից տրված 23.02.2022թ. թիվ 01012201 եզրակացությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Հմ՝ 01012201 «23» փետրվարի 2022թ.

Փորձաքննության տեսակը՝ ապրանքագիտական:

Փորձաքննության հիմքը՝ «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Աբրահամյանի 22.02.2022թ. դիմումի հիման վրա կնքված պայմանագիրը:

Փորձաքննությունը սկսվել է՝ 2022թ. փետրվարի 22-ին:

Տեղեկություններ փորձագետի մասին:

Ստեփան Արսենի Միսակյան. ապրանքագետ-փորձագետ, բարձրագույն կրթությամբ, ապրանքագիտական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ (Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից շնորհված որակավորում «Ապրանքագիտություն» մասնագիտությամբ, վկայական N^0 089), մասնագիտական աշխատանքի 39 տարվա ստաժով, այդ թվում փորձագիտական աշխատանքի 23 տարվա ստաժով, արդարադատության առաջին դասի իրավաբան:

Փորձաքննությանն առաջադրված հարցերը

Ապրանքագիտական փորձաքննությամբ պարզել «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերին ներկայացված «BEHTC BKM 150» մոդելի օդամուղ սարքավորումը ապահովում է փորձաքննությանը տրամադրված ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերի և հրավերի «Հավելված N 1.2»-ի օդափոխության բաժնի 5 կետում նշված 450մ^3/ժամ օդամուղ սարքի արտադրողականությունը:

Փորձաքննությանը տրամադրվել են՝ «BEHTC BKM 150» մոդելի օդամուղ սարքավորման տեխնիկական բնութագրի, ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերը, հրավերի

«Հավելված 1.2»-ի և «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի՝ նույն մրցույթին ներկայացված «Հավելված N 1.2»-ի պատճենները:

Հանգամանքները

««ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/10, Երևան քաղաքի «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի շենքի «Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ» կառուցման աշխատանքներ բաց մրցույթին: Մրցույթի հրավերի Հավելված 1.2-ի օդափոխության բաժնի 5 կետում պահանջվում էր «սալօջախի վրա տեղադրվող գլխանոց օդամուղով 450մ^3/ժամ» արտադրողականությամբ սարքավորում, մեր կազմակերպության կողմից մրցույթին ներկայացրել ենք «ВЕНТС ВКМ 150» մոդելի սարքավորումը: Խնդրում ենք տալ Ձեր եզրակացությունը արդյոք մեր ներկայացված սարքավորման արտադրողականությունը ապահովում է պահանջվող սարքի արտադրողականությունը: Կից ներկայացնում ենք վերը նշված մոդելի տեխնիկական բնութագիրը, մրցույթի հրավերը, հրավերի Հավելված N 1.2-ը և մեր կողմից մրցույթին ներկայացված Հավելված N 1.2:» /ըստ դիմումի/:

Օգտագործված գրականություն

1. համացանցային կայքեր, List.am:
2. https: //vents. ua/product/vkm-150#characteristic
3. https: // vents-shop.ru/ventilyator-vents-vkm-150/

Հետազոտություն

2022թ. փետրվարի 22-ին, հետազոտելով «ВЕНТС ВКМ 150» մոդելի օդամուղ սարքավորման փորձաքննությանը տրամադրված տեխնիկական բնութագիրը, ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերի «Հավելված N1 և «ՍԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի՝ նույն մրցույթին ներկայացված «Հավելված 1.2»-ը, ինչպես նաև կատարելով համացանցային կայքերի ուսումնասիրություններ, պարզվեց, որ հետազոտման առարկա հանդիսացող «ВЕНТС ВКМ 150» մոդելի օդափոխության համար նախատեսված ապրանքատեսակն իրենից ներկայացնում է «կլոր անցուղային կենտրոնախույս օդամուղ»՝ պողպատյա իրանով, առավելագույնը 560 սմ^3/ժամ օդի հոսքի արտադրողականությամբ:

Ելնելով վերոգրյալից, գալիս ենք այն եզրահանգմանը, որ «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի կողմից՝ ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերի մրցույթին ներկայացված «Հավելված 1.2»-ի օդափոխության բաժնի 5 կետում նշված «ВЕНТС ВКМ 150» մոդելի

օդափոխության համար նախատեսված օդամուղ սարքի օդի հոսքի արտադրողականությունն ապահովում է ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերի «Հավելված N 1.2»-ի օդափոխության բաժնի 5 կետում նշված պահանջվող սարքի 450մ^3/ժամ արտադրողականությունը:

Հետևություններ

<u>Փորձաքննության առարկա հանդիսացող, «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ի կողմից՝ ՀՀՔԿ- ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերի մրցույթին ներկայացված «Հավելված N 1.2»-ի օդափոխության բաժնի 5 կետում նշված «BEHTC BKM 150» մոդելի օդափոխության համար նախատեսված օդամուղ սարքի օդի հոսքի արտադրողականությունն ապահովում է ՀՀՔԿ- ԲՄԱԾՁԲ-21/10 բաց մրցույթի հրավերի «Հավելված N 1.2»-ի օդափոխության բաժնի 5 կետում նշված պահանջվող սարքի 450մ^3/ժամ արտադրողականությունը</u>»:

2. Ինչ վերաբերում է Ընկերության հայտը՝ փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չլինելու հիմքով մերժելուն (փաստաթղթերը ներկայացվել են ձեռագիր ստորագրված և կնքված բնօրինակից արտատպված տարբերակով), հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Ընկերության կողմից ներկայացվել է 11.02.2022թ. տրված տեղեկանք, հետևյալ բովանդակությամբ.

«Ես՝ Հայկ Կառլենի Գրիգորյանս (Ն/Ք 009660929 տրվ. 21.12.2017թ.-ին 003-ի կողմից) իրականացնում են համակարգիչների վերազինման, վերանորոգման աշխատանքներ:

Սույն թվականի հունվարի 18-ին «Մեդիսոն էյբլ» ՍՊԸ-ում համակարգիչները խափանվել են, որպես մասնագետ հրավիրվել եմ և կատարել եմ ընկերության պատկանող համակարգիչների ծրագրերի վերազինման և վերանորոգման աշխատանքներ, որի հետևանքով այդ օրը համակարգիչները աշխատել են խափանումներով»:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Նույն օրենքի «Որոշման կամ եզրակացության շարադրանքը» վերտառությամբ 64-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը, կախված գործի բնույթից, պարունակում է հետևյալ տեղեկությունները՝ դատարանի ընդունած որոշումը կամ եզրակացությունը հիմնավորող իրավական դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՍԴՈ–722 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիքորոշումը. ««Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4–րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, (...):

(...): Բոլոր այն դեպքերում, երբ օրենքով ներկայացվող փաստաթղթի (դիմումի) ստորագրված լինելու պայման է առաջադրված և պարտադիր չէ նոտարական կարգով անձի ստորագրության վավերականության հաստատում, ***<u>ապա որևէ տարբերակում չպետք է դրվի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված կամ օրենքով սահմանված կարգին համապատասխանող էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթղթերի միջև»:</u>***

3. Ինչ վերաբերում է Ընկերության հայտը՝ Հավելված 1.2-ի մասով՝ 6-7-րդ տողերով ներկայացված մոդելները հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով մերժելուն, ապա այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերությամբ սահմանվում է, որ ***մասնակիցը շինարարական աշխատանքների գնման դեպքում <u>հայտով ներկայացնում է</u> իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, <u>մոդելները (առկայության պարագայում)</u>, արտադրողները և երաշխիքային ժամկետները:***

Ընդ որում՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>***, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Վերոգրյալ փաստական հանգամանքների և վկայակոչված իրավական նորմերի համատեքստում, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.2-ում 6-7-րդ տողերում մոդելները չներկայացնելու հիմքով, արձանագրելով անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, գործել է ոչ իրավաչափ և արդյունքում թույլ տվել Կարգի 41-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերության և Ընթացակարգի հրավերի Հավելված N 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի համաձայն՝ մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ միայն սահմանվել է առկայության պարագայում, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերության կողմից հայտով մոդելների չներկայացնելը չի կարող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն շտկման պահանջ ներկայացնելու հիմք

հանդիսանալ, քանի որ Ընկերությունը տվյալ դեպքում թույլ չի տվել հրավերով սահմանված պահանջի խախտում:

4. Ինչ վերաբերում է Ընկերության հայտը՝ Հավելված 1.2-ի մասով՝ 3-4-րդ տողերով ներկայացված մոդելները հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով մերժելուն, ապա այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.01.2022թ. նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.2-ում 3-4-րդ տողերում նշված մոդելներն անձնագրային տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, այնուհետև ներկայացրել է շտկման պահանջ և որպես շտկում ներկայացված փաստաթղթի ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ 3-4-րդ տողերով ներկայացված մոդելները հրավերի պահանջներին չեն համապատասխանում՝ մերժելով Ընկերության հայտը:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ առկա չէ որևէ հիմնավորում, թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ինչ տվյալների ուսումնասիրության արդյունքում ձեռքբերված փաստական հանգամանքների համադրման հիման վրա է արձանագրել անհամապատասխանություն, որը չշտկելու արդյունքում Ընկերության հայտը մերժվել է, որպիսի պայմաններում հնարավոր չէ արձանագրել, արդյո՞ք առկա են եղել Կարգի 41-րդ կետի կիրառման հիմքերը:

Այսպիսով՝ սույն ընթացակարգի քննության շրջանակներում՝ վերը շարադրված փաստական հանգամանքների և իրավական նորմերի հաշվառմամբ, գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2022թ. թիվ 26/26-1/1710-2022 գրությամբ «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**